

Ալեքսանին՝ որ փոխեցաւ թվին՝ ՌՄԵ
Դեկտեմբերի Ա.ին:

6.

Մալաթիայի թէրզի պաշի պարոն
Կոնտնոսի կողակցի Մարիամ՝ խաթունին
որ փոխեցաւ ի կեանս թվին ՌՄԳին
ապրիլի Բին:

7.

Այս է, տապան, հանգստեան, քա-
ղարճոցի պարոն Մտին դարը Ատավրտի,
կողակցի հանգուցեալ Սիման, որ փո-
խեցաւ ի կեանս ՌՄԿԲին փետրվարի Ժ:

8.

Այս է տապան հանգստեան հանգել
կանանեօսի որդի՝ հանգել օյանէսին՝ որ
փոխեցաւ աստէն՝ ի կեանս թվին Հայոց
ՌՄԿԳին եւ յուլիսի ԺԵին:

9.

(Աղբիւրի քարին տակ անընթեռնի.
թուականն է) ՌՄԿԷ Դեկտ.ի ԻԵին:

10.

Այս է՝ տապան՝ հանգստեան՝ կա-
նանեօսի որդի հանգուցեալ Զաքարին՝ որ
փոխեցաւ աստէն՝ ի կեանս թվին ՌՄԿԸ
մայիսի ԺԲ:

11.

Այս է տապան հանգստեան տիար-
պէքերցի՝ Աստուածատուրի՝ որդի հեզա-
հօգի՝ պարօն՝ Օհանին՝ որ փոխեցաւ ի
կեանս թվին ՌՄՀԲ Յունվարի Ժին:

(Առազանաքար:)

Այս է տապան Ծորթէնէնց ծատուրի
որդի (Հայրապ)եօսին որ փոխեցաւ Բրիս-
տոսի...

Սոփիա:

ԳՐ. ԻԽԹԻՆՅԱՆ



Մ Ա Տ Ե Ն Ա Ռ Օ Ս Ա Կ Ա Ն

“ԲԱՆԲԵՐ”, Հայաստանի գիտական ինստիտուտի:

“Հայաստանի գիտական ինստիտուտին” է
պատկանում “Բանբեր”ը, որ լոյս է տեսնում
Էջմիածնում գիտական կաճառի խմբագրու-
թեամբ: Մեր ձեռքի տակ ունինք հանդիսի Ա.
Ե. Բ. գիրքը, մէկ հատորով, որ կրում է
1921—1922 թուականները, դա 329 երկ-
սիւն էջից բաղկացած ստուար եւ մեծագիր մի
հատոր է — ճիշտ “Հանդէս Ամսօրեայ”ի
գիրքով, որ տպագրուել է ամենածանր պայ-
մանների մէջ եւ ամենամեծ ջոհողութիւն-
ներով:

Ինչո՞ւմ է կայանում “Բանբեր”ի ուղ-
ղութիւնը: Թերթի խմբագրութիւնը երկու
խօսքով ընտրուում է իր նպատակը այսպէս.

“Գիտական ինստիտուտի” “Բանբեր”ը
իր առաջնակարգ նպատակն է համարում
միջոց ընծեռել գիտական ուսումնասիրու-
թեան ենթարկելու Հայաստանի աշխար-
հագրութիւնն ու ազգագրութիւնը, տնտե-
սական կացութիւնն ու յարաբերութիւն-
ները, պատմութիւնն ու գրականութիւնը,
հնագիտութիւնն ու արուեստը եւ այլն:”

Այսպէս “Բանբեր”ը գալիս է լրացնելու
մի խոշոր բաց մեր մտաւոր մշակոյթի ասպա-
րիզում: Նա միանում է, իբրեւ առաջնակարգ
լծակ, գրական յառաջագիմական այն հոսան-
քին, որ սկսել է “Նորքը” Երեւանում, իսկ
“Նոր-Աշխարհը”՝ Թիֆլիսում: Նա ասպարէզ է
գալիս իբրեւ գիտական գործօն ժամանակի
մտաւոր շարժման:

Եւ իրաւի “Բանբեր”ի ամենաառաջին
գիրքը արդարացնում է իր գծած նպատակը
դա գիտական մի լուրջ ժողովածու է, որի մէջ
հանդէս են գալիս հայ ժողովրդի արուեստն ու
գիտութիւնը, նրա քաղաքակրթութիւնն ու
կուլտուրան, պատմութիւնն ու գրականութիւնը
հնութիւններն ու յուշարձանները: Այնտեղ
ընթերցողի առաջ բացւում է պատմա- հնագի-
տական, բանասիրական-ազգագրական, գրական
եւ մատենագրական մի ամբողջ աշխարհ, հա-
րուստ եւ գեղեցիկ մի թանգարան: Այդ թանգա-
րանը կառուցուած է բարեխիղճ աշխատանքով
եւ դա հասկանալի է: Հանդիսի դրօշի շուրջ
համախմբուել մեր գիտական-գրական աշխարհը